

Ժողովրդաիշխանության սկզբունքը՝ որպես սահմանադրական կարգի հիմունք

Թադևոսյան Ա. Յ.

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչության
ախագ իրավաբան (Երևան, Հայաստան)
armantadevosyan123@gmail.com

Հանգուցքառեր՝ սահմանադրություն, սահմանադրական սկզբունք, սահմանադրական կարգի հիմունքներ, ժողովրդաիշխանության սկզբունք, Սահմանադրական դատարանի որոշումներ, երաշխիք, լեգիտիմություն:

Принцип народовластия как основа конституционного строя

Тадевосян А. Ю.

*Аспирант кафедры юриспруденции Академии государственного управления РА,
Старший юрист юридического департамента аппарата Премьер-министра РА (Ереван, Армения)
armantadevosyan123@gmail.com*

Аннотация. Цель статьи – изучение и анализ конституционных принципов, как составляющих системное единство конституционных ценностей, являющихся основами конституционного строя, а также конкретное изучение принципа народовластия в системе основ конституционного строя. В ходе исследования была поставлена задача представить существующие отношения и взаимосвязи между основами конституционного строя, а также изучить место и роль принципа народовластия в этой системе и рассматривать решения Конституционного Суда Республики Армения.

В результате исследования мы пришли к выводу, что конституционные принципы, составляющие основы конституционного строя, взаимозависимы и взаимосвязаны, образуют идеологическую, логическую цепочку, и это обстоятельство следует рассматривать как ориентировочную идею для решения возможных коллизий между ними. Принцип народовластия, свидетельствующий о принадлежности верховной власти народу, придает государственной власти легитимность во всех ее формах, а это, в свою очередь, является важным предусловием для эффективной реализации государственной власти.

Ключевые слова: Конституция, конституционный принцип, основы конституционного строя, принцип народовластия, решения Конституционного Суда, гарантия, легитимность.

The principle of people's power as fundamental of constitutional order

Tadevosyan A. Y.

*PhD student of the Chair of Law of the Public Administration Academy of the Republic of Armenia,
Senior lawyer of the Legal Department of the Office of the Prime Minister of the Republic of Armenia
armantadevosyan123@gmail.com*

Abstract. The purpose of the article is to study and analyze the constitutional principles that are the fundamentals of the constitutional order, as constitutional values that make up a single systemic unity, as well as to study specifically the principle of people's power in the system of the fundamentals of the constitutional order. In the course of the study, the task was to present the existing relations and relationships between the fundamentals of the constitutional order, as well as to study the place and the role of the principle of people's power in this system, and to refer to the decisions of the Constitutional Court of the Republic of Armenia.

As a result of the study, we came to the conclusion that the constitutional principles that form the fundamentals of the constitutional order are interdependent and interrelated, they form an ideological, logical chain, and this circumstance should be considered as an indicative idea for solving possible conflicts between them. The principle of people's power, testifying to the supreme power belonging to the people, give the state power legitimacy in all its forms, and this, in its turn, is an important precondition for the effective implementation of state power.

Key words: Constitution, constitutional principle, fundamentals of the constitutional order, the principle of people's power, decisions of the Constitutional Court, guarantee, legitimacy.

Հայրենական իրավագիտության մեջ ընդունված է այն մոտեցումը, որ իրավունքի սկզբունքները հիմնարար, ղեկավար, առաջնային, ելակետային գաղափարներ են, որոնք հանդի-

սանում են իրավական համակարգի հենասյունը, արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, կանխորոշում են հասարակական հարաբերությունների իրա-

վական կարգավորման ընդհանուր ուղղվածությունը, որոշում են իրավունքի ձևավորման, զարգացման, կիրառման գործընթացը, ունեն համապարտադիր բնույթ [1, էջ 242; 2, էջ 126; 3, էջ 45; 4, էջ 258]:

Իրավունքի սկզբունքները դասակարգվում են ընդհանուր (համաիրավական), միջնյուղային և ճյուղային սկզբունքների: Իրավունքի ընդհանուր սկզբունքները գործում են անմիջականորեն կամ միջնորդավորված՝ արտացոլվելով միջնյուղային և ճյուղային սկզբունքներում, իսկ երբեմն նաև՝ կոնկրետ իրավանորմերում:

«Իրավական սկզբունքներն ինչպես անմիջականորեն իրավական գաղափարներից կամ Սահմանադրությունից արտածվող դրույթներ են, այնպես էլ իրավակարգի մի հատվածի հիմքում ընկած սկզբունքներ: Ընդհանուր իրավական սկզբունքները՝ իբրև ընդհանուր արժեքային մասշտաբներ, ուղենիշային իրավական գաղափարներ են առաջարկում կոնֆլիկտների լուծման համար: Դրանք նորմեր են, որոնք մյուսներից տարբերվում են իրենց բովանդակության խիստ ընդհանուր բնույթով» [5, էջ 50]: Այս մոտեցման հեղինակը, կարծես, սկզբունքները նույնացնում է նորմերի հետ, մինչդեռ, հարկ է նշել, որ սկզբունքները առավել հիմնարար գաղափարներ են, դրանք այն ելակետերն են, որոնց հիման վրա ստեղծվում են նորմերը:

Այս համատեքստում ֆրանսիացի հայտնի տեսաբան Ժ.Լ. Բերժեյը անդրադառնալով սկզբունքների և իրավական նորմերի առանձնահատկություններին նշում է, որ թեև իրավական նորմերն ուղղված են անորոշ քանակի փաստերին ու գործողություններին, այդուհանդերձ, դրանք ուղղված են միայն իրենց կարգավորման առարկայի շրջանակում ներառվող հարաբերությունների կարգավորմանը, մինչդեռ սկզբունքներն ունեն անսահման լայն կիրառություններ» [6, էջ 169]:

Իսկ մեկ այլ հեղինակ նշում է, որ իրավունքի սկզբունքները թափանցում են բոլոր իրավական նորմերի մեջ և իրավական ողջ համակարգի միջուկն են, դրանք կարող են ամրագրվել իրավական նորմերում (նորմ-սկզբունքներում), սահմանադրություններում, օրենքներում [7, էջ 69]:

Համաիրավական սկզբունքների շրջանակը, ցանկը հնարավոր չէ միանշանակ, սպառիչ սահմանել, սակայն դրանք առավելապես սահմանադրական սկզբունքներ են:

«Իրավունքի ընդհանուր սկզբունքները (սահմանադրական արժեքները) խտացված կերպով արտացոլված են Սահմանադրության նախաբանում, սահմանադրական կարգի հիմունքներին և մարդու իրավունքներին նվիրված գլուխներում» [8, էջ 5]:

Սահմանադրական սկզբունքների հիմնական առանձնահատկությունը, որով դրանք

տարբերվում են իրավունքի այլ սկզբունքներից, դրանց հատուկ տեղն է իրավական համակարգում, որը որոշվում է սահմանադրության՝ որպես պետության հիմնական օրենքի բարձրագույն իրավաբանական ուժով:

Սահմանադրական սկզբունքները հանդես են գալիս որպես հասարակական հարաբերությունների այն հատվածի առավել լայն իրավական կարգավորումը, որոնք կազմում են պետության և հասարակության հիմքը, որոնց վրա կառուցվում են բոլոր այլ սոցիալական կապերը, ինչն էլ ենթադրում է դրանց իրացման բազմաթիվ ձևեր, մինչդեռ կոնկրետ իրավական նորմերն ընդամենն այդ սկզբունքների կիրառման առանձին դեպքեր են: Այս սկզբունքները գաղափարական հիմք են ծառայում ողջ պոզիտիվ իրավունքի կամ նրա որոշ ճյուղերի համար: Ուստի, դրանք պետք է համարել իրավաստեղծ սկզբունքներ [6, էջ 169-170]:

Ժամանակակից սահմանադրություններում ամենակարևոր և ամենաառանցքային տեղը զբաղեցնում են սահմանադրական կարգի հիմունքները կազմող սկզբունքները: Այս սկզբունքները հանդիսանում են իրավունքի ընդհանուր սկզբունքների տարատեսակ, որոնց հիման վրա կառուցվում են իրավունքի ճյուղերն ու ինստիտուտները, օրենսդրական համակարգը և տեղի է ունենում հասարակական հարաբերությունների, դրանցում ներգրավված տարբեր մասնակիցների վարքագծի իրավական կարգավորում:

Յուրաքանչյուր պետության սահմանադրություն, անկախ «սահմանադրական կարգ» հասկացության օգտագործումից, սահմանում է որոշակի հիմնարար սկզբունքներ, որոնք բնորոշում են տվյալ պետության էությունը և իշխանական համակարգը: Այդ սկզբունքների ամբողջությունից է բխում տվյալ պետության ինքնությունը: Սահմանադրական կարգի հիմունքներն առաջին հերթին ամրագրում են, թե ում է պատկանում իշխանությունը (ինքնիշխանության կրողը), ինչպես է իրականացվում այդ իշխանությունը, և ինչ մարմիններ են կոչված իրականացնելու այն [9, էջ 24]:

«Սահմանադրական իրավունքը ամրագրելով սահմանադրական կարգի հիմունքները, «Ռուսական պետության» դերը, ժողովրդաիշխանության մեխանիզմները, մարդու և քաղաքացու կարգավիճակի հիմքերը՝ դառնում է արդի բոլոր քաղաքական հարաբերությունների և գործընթացների հիմքը» [10, էջ 130]:

Աշխարհայացքային, գաղափարախոսական իմաստով սահմանադրությունը հասարակական-քաղաքական գաղափարների (սկզբունքների) «խտացումն» է մի տեղում, որը պետությունը հոչակում է որպես հիմնական և պարտավորվում է պահպանել իր կազմակերպ-

ման և գործունեության ընթացքում: Եթե այդ գաղափարներն ու սկզբունքները գտնվում են ակնհայտ հակասության մեջ կամ կտրված են իրականությունից, հայրենական մտածողությունից, մենթալիտետից, ապա դա կարող է «ական» լինել, որը վաղ թե ուշ կհանգեցնի սահմանադրական կարգի ճգնաժամի և կառաջացնի սահմանադրական բարեփոխումների պահանջ [11, էջ 114]:

Որպեսզի դա տեղի չունենա կամ անցնի հնարավորինս քիչ ցնցումներով պետության և հասարակության սոցիալ-քաղաքական միասնության համար, անհրաժեշտ է առանձնացնել, որոշել Սահմանադրության, նրա կառուցվածքի կենտրոնական, հիմնական օղակը՝ հաշվի առնելով վերջինիս՝ իրավունքի հիմնական աղբյուր հանդիսանալու հանգամանքը:

Տվյալ դեպքում, խոսքը վերաբերում է Սահմանադրության մեջ իրենց ամրագրումը ստացած հիմնարար սկզբունքների հիերարխիային և ստորադասությանը: Չնայած այն հանգամանքին, որ նման սկզբունքներն իրենց ամբողջության մեջ կազմում են սահմանադրական կարգի հիմունքները, դրանք նույնական չեն իրենց այն դերով ու նշանակությամբ, որը նրանք ունեն հասարակական հարաբերությունների ամրագրման և կարգավորման մեջ: Նրանք բոլորն իրենցից ենթադրում են ոչ թե «պարզ ամբողջություն, այլ օրգանական միասնություն, ամբողջական մեկ համակարգ» [12, էջ 32]:

Միաժամանակ, ցանկացած այնպիսի համակարգ, որում առկա է այն կազմող տարրերի ամբողջականություն և միասնականություն, մշտապես բնութագրվում է ոչ միայն այդ տարրերի միջև եղած կապերի և հարաբերությունների առկայությամբ, այլև դրանց որոշակի կառուցվածքով, բազմաշերտայնությամբ և, հետևաբար, հիերարխիկությամբ [13, էջ 584-585]:

Սահմանադրական սկզբունքների համակարգում սահմանադրական կարգի հիմունքները հանդես են գալիս որպես մի խումբ, որն ունի գերակա, առաջնահերթ նշանակություն և ղեկավար դեր է կատարում մյուս սկզբունքների համար: Այսպիսի հիերարխիան կանխորոշվում է ինքնին սահմանադրական իրավունքի ճյուղի և Սահմանադրության՝ որպես դրա հիմնական աղբյուրի նշանակությամբ:

Սահմանադրական կարգի հիմունքները կազմող սահմանադրական սկզբունքները հարկ է դիտարկել որպես պետության և հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների կազմակերպման և գործունեության իրավաբանորեն արտահայտված օբյեկտիվ օրինաչափություններ, որոնք ամրապնդվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ

որպես համընդհանուր ճանաչված սոցիալ-քաղաքական և իրավական արժեքներ:

2015 թ. խմբագրությանը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության առաջին գլուխը ամրագրում է հայոց պետականությունը բնորոշող հիմնարար սկզբունքները, որոնց մեջ առանձնահատուկ նշանակություն ունեն Սահմանադրության առաջին երեք անփոփոխ հոդվածներում ամրագրված ինքնիշխանության, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության սկզբունքները (հոդված 1), ժողովրդաիշխանությունը (հոդված 2), մարդու ճանաչումը որպես բարձրագույն արժեք (հոդված 3): Սահմանադրության 1-3-րդ հոդվածներում ամրագրված հիմնարար սկզբունքները և Սահմանադրության արժեքաբանական կողմնորոշիչներն իրենց հետևողական իրացումն են գտել ողջ տեքստում [9, էջ 24-25]:

«Սահմանադրության առաջին գլխում իրենց ամրագրումը ստացած սահմանադրական կարգի հիմունքները կազմող սկզբունքների վերլուծությունը ցույց է տալիս դրանց էության հիմնարար գաղափարական-քաղաքական, իրավական փոխկապակցվածությունն ու փոխապամանավորվածությունը: Այդ սկզբունքները փոխլրացնում են միմյանց՝ ձևավորելով որոշակի համակարգային միասնություն, ամբողջականություն: Մի սկզբունքի բովանդակությունը հաջորդաբար բխում է մյուսի բովանդակությունից, ինչը ևս վկայում է դրանց միջև բովանդակային և նորմատիվ սուբորդինացիայի առկայության մասին: Այսպիսով, այդ սկզբունքները նույնպես գտնվում են գաղափարական-բովանդակային որոշակի փոխկախվածության մեջ միմյանց նկատմամբ:

Վ.Տ. Կաբիշեվը և Տ.Մ. Պոյախինը նշում են, որ «առանց ռուսական սահմանադրականության սկզբունքների միասնականության խոսք անգամ չի կարող լինել համընդհանուր իրավական արժեքների մասին, որոնք պետք է դառնան ռուս ժողովրդի բարեկեցության, ռուսական պետականության շարունակական և անցնցում զարգացման գրավականը» [14, էջ 32]: Մենք համաձայն ենք այս մտքի հետ և գտնում ենք, որ այն վերաբերելի է նաև հայկական պետականության պարագայում:

Սահմանադրական կարգի հիմունքները կազմող սկզբունքների մեջ առանձնահատուկ և կարևորագույն դեր ու նշանակություն ունի ժողովրդաիշխանության սկզբունքը, որը գտնվում է համակարգային միասնության մեջ սահմանադրական կարգի հիմունքները կազմող այլ սկզբունքների հետ:

Ն.Ա. Բորրովան ճշմարտացիորեն նշում է. «Ժողովրդաիշխանություն՝ ահա սահմանադրական կարգի էությունը» [11, էջ 49]:

Ժողովրդաիշխանության գաղափարը, հանդիսանալով տարբեր իրավական համակարգեր ունեցող պետությունների իրավական գաղափարախոսությունների համար միավորող սկզբունք, իր արմատներով ետ է գնում մինչև մարդկության հազարամյա պատմության խորքեր:

Մի շարք երկրների սահմանադրություններ ամրագրում են այս սկզբունքը [15, հոդված 3; 16, հոդված 1; 17, հոդված 20; 18, հոդված 2; 19, հոդված 3; 20, հոդված 10; 21, հոդված 6] և բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

«Մեկնաբանվող սկզբունքը կարևոր նշանակություն ունի սահմանադրական կարգի հիմունքների շարքում: Հաջորդելով 1-ին հոդվածին, որն ամրագրում է Սահմանադրությամբ հիմնադրված պետականության բնութագրերը, կազմակերպման և գործունեության հիմնարար սկզբունքները, այն փաստում է շատ կարևոր հիմնադրույթ. պետական իշխանության համակարգը, նրա ինքնիշխանությունն անանցված են ժողովրդից, նրա ինքնիշխանությունից, ժողովուրդը հասարակական համակարգում ունի հիմնադրի կարգավիճակ» [22, էջ 55]:

Օ.Ե. Կուտաֆինը նշում է. «Ժողովրդաիշխանությունը նշանակում է որջ իշխանության պատկանելությունը ժողովրդին, ինչպես նաև ժողովրդի կողմից այդ իշխանության ազատ իրականացումը իր սուվերեն կամքին և հիմնական շահերին խիստ համապատասխան» [23, Ը. 98]:

ՀՀ սահմանադրական դատարանը իր որոշումներից մեկում անդրադառնալով այս սկզբունքի բովանդակությանը, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը, որը համահունչ է նաև տեսության մեջ առկա մտեցումներին. «... Ժողովրդաիշխանության սահմանադրական իմաստից, մասնավորապես, բխում են ժողովրդի հետևյալ հիմնական իրավունքները. 1) լինել գերագույն իշխանության ստրուկտուրա և կրող, 2) ձևավորել իշխանության ներկայացուցչական մարմիններ, 3) պատվիրակել սեփական լիազորություններն իշխանության ներկայացուցչական մարմիններին, 4) ունենալ իր այդ իրավունքների սահմանադրորեն ամրագրված կարգավիճակ» [24]: Այդպիսով, հաշվի առնելով Սահմանադրական դատարանի որոշումների համապարտադիրությունը [25; 26, էջ 77-82] կարող ենք փաստել, որ այս սկզբունքի իրավական բովանդակությունը

տեսական հարթությունից տեղափոխվում է նաև գործնական, իրավակիրառ ոլորտ:

Ինչպես վերևում նշեցինք, ժողովրդաիշխանության սկզբունքը գտնվում է համակարգային միասնության մեջ սահմանադրական կարգի հիմունքները հանդիսացող այլ սկզբունքների հետ, սակայն, նրանց միջև, երբեմն, դրևստրվում են հակասություններ:

Այդպիսի հնարավոր հակասության մասին է խոսում Ա.Ն. Կոկոտովը, հարցը դիտարկելով, մասնավորապես, ժողովրդաիշխանության և մարդու իրավունքների և ազատությունների առաջնահերթության սկզբունքների հարաբերակցության պրիզմայով: Ըստ Կոկոտովի՝ ժողովրդաիշխանությունը կարող է կիրառվել այնպես, որ դրանով «մեծամասնության» կողմից ընդունված որոշումներով տեսականորեն խախտվեն «փոքրամասնության» շահերը, մյուս կողմից՝ մարդու իրավունքների և ազատությունների տեսանկյունից կարող են սահմանվել, այսպես կոչված «դրական խտրականության» դեպքեր, որոնցով էլ առավել նպաստավոր պայմաններ ստեղծվեն «փոքրամասնության» շահերի համար [27, էջ 2166]:

Կարծում ենք՝ այսպիսի «հիպոթետիկ» հակասությունների լուծման համար պետք է հաշվի առնվեն այն շահերն ու նպատակները, որոնք ընկած են այսպիսի «քայլերի» ետևում: Այսինքն՝ այն դեպքում, երբ առաջնա որոշակի «կոնֆլիկտ» սահմանադրական կարգի հիմունքները կազմող սահմանադրական սկզբունքների միջև հարկ է այդ հակասությունը դիտարկել խնդրո առարկա սկզբունքների համակարգային տրամաբանական փոխկախվածության, փոխկապակցվածության մեջ՝ հաշվի առնելով այդպիսի կարգավորման վերջնական նպատակը, հանրօգուտ բնույթը, հետապնդվող հանրային և մասնավոր շահերի հարաբերակցությունը:

Այդ դեպքում համոզիչ է թվում նաև Ա. Դամբարյանի այն մտեցումը, որ «շատ հնարավոր է, որ մի գործով նախապատվություն չունեցող սկզբունքին մեկ այլ գործով տրվի նախապատվություն: Իրավունքի սկզբունքների կոնֆլիկտի լուծումը կախված է կոնկրետ գործի հանգամանքներից, տվյալ ժամանակաշրջանում և տվյալ սոցիումում գերակայող բարոյական և փիլիսոփայական գաղափարախոսությունից»: [8, էջ 6-7]

Տեսության մեջ հաճախ է խոսվում ժողովրդաիշխանության սկզբունքի և դրա շնորհիվ իշխանության լեգիտիմության մասին: Մասնավորապես, Ն.Ս. Չեպուրնովան նշում է. «Ժողովրդաիշխանության սկզբունքի իրացումը պետության համար սպասելի է իշխանության լեգիտիմությունը: Այդ առումով լեգիտիմությունը հանդիսանում է իշխանության ժողովրդավարացման նախապայման, քանի որ այն արտահայտում է իշխանություն կրողի՝ ժողովրդի վերաբերմունքը

այդ իշխանությունն իրականացնող մարմինների և պաշտոնատար անձանց նկատմամբ» [28, էջ 56]: Նույն հեղինակը նաև իրավացիորեն նշում է, որ իշխանության լեգիտիմությունը սերտ կապված է այդ իշխանության իրականացման արդյունավետության հետ, այդպիսով ընդգծելով ժողովրդաիշխանության նշանակությունը այս հարցում [28, էջ 57]:

«Ժողովրդի կամքը լեգիտիմություն է հաղորդում պետական իշխանությանը, նրա բոլոր ձևերին՝ օրենսդիր, գործադիր, դատական իշխանություններին: Ընդ որում, ինչպես նշում է Վ.Վ. Կոմարովան, «սահմանադրական նորմը մատնանշելով իշխանության արդյուրը այդպիսով ընդծում է նաև դրա սկզբնաղբյուրը»: Ժողովրդաիշխանության՝ որպես սահմանադրական կարգի հիմունքի կարևորությունը ընդգծվում է ոչ միայն իշխանության լեգիտիմացման մեջ, այլև նրանում, որ սրա հետ փոխկապակցված մի շարք իրավունքների երաշխավորումը պայմանավորված է հենց այս սկզբունքի գոյությամբ» [29, էջ 8]:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկում անդրադառնալով, մասնավորապես, ընտրական ցուցակներում ընդգրկվելու իրավունքին նշեց. «... ընտրական ցուցակներում ընդգրկվելու՝ քաղաքացու իրավունքի ճանաչումն ունի սահմանադրական նշանակություն, քանի որ այն անհրաժեշտ է ազատ ընտրությունների միջոցով ժողովրդաիշխանության իրականացման, ընդհանուր ընտրությունների անցկացման և ընտրական իրավունքի իրացման համար ...» [30]: Մեկ այլ որոշմամբ, Սահմանադրական դատարանն արտահայտեց հետևյալ իրավական դիրքորոշումը. «ՀՀ Սահմանադրության 1, 2, 3, 5, 11.2., 30, 43, 104, 107 և այլ հոդվածներում սահմանված են ժողովրդաիշխանության և դրա իրականացման երաշխավորման, անձանց՝ որպես այդ իշխանության անմիջական կրողների, իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու երակետային նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում՝ նաև տեղական (համայնքային) նշանակության հարցեր լուծելու հետ կապված հարաբերությունների կարգավորման բնագավառում» [31]:

Սահմանադրական կարգի հիմունք հանդիսացող այս սկզբունքի սահմանադրաիրավական արժեքը կայանում է նաև նրանում, որ վերջինիս կյանքի կոչումը չի կարող կախվածության մեջ դրվել ժամանակային նպատակահարմարությունից կամ քաղաքական կոնյուկտուրայից և դրա ցանկացած սահմանափակում պետք է իրականացվի միայն բացառիկ ծանրակշիռ հիմքերով, որոնք ուղղված կլինեն պետության և

հասարակության բարեկեցությանն ու կենսապահովմանը [29, էջ 11-12]:

Այսպիսով, սահմանադրական կարգի հիմունքները կազմող սահմանադրական սկզբունքները փոխկախված են միմյանցից և փոխկապակցված են, կազմում են գաղափարական, տրամաբանական շղթա, սակայն չնայած այդ հանգամանքին, տեսության մեջ խոսվում է նրանց միջև հնարավոր հակասությունների մասին: Գտնում ենք, որ այդ հակասությունների լուծման համար որպես ուղենիշներ կարող են հանդես գալ հոդվածում առաջ քաշված գաղափարները:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներով հստակեցվում է ժողովրդաիշխանության սկզբունքի իրավական բովանդակությունը, ընգծվում է վերջինիս սահմանադրաիրավական արժեքը, այն դիտարկվում է որպես երաշխիք առանձին այլ իրավունքների կենսագործման համար: Ժողովրդաիշխանության սկզբունքը, վկայելով ժողովրդին պատկանող գերագույն իշխանության մասին, իր առանձնահատուկ նշանակությունն ունի սահմանադրական կարգի հիմունքների համակարգում, այն լեգիտիմություն է հաղորդում պետական իշխանությանը՝ իր բոլոր ձևերով հանդերձ, իսկ դա էլ իր հերթին կարևոր նախապայման է հանդիսանում պետական իշխանության արդյունավետ իրականացման համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Ղամբարյան Ա., Մուրադյան Մ.**, Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ, 3-րդ լրամշակված հրատարակություն: – Եր. 2018
2. **Մալխասյան Լ. Մ.**, Իրավունքի սկզբունքների դերը ՀՀ իրավական համակարգում, պրակտիկ և տեսական վերլուծություն, ատենախոսություն: – Եր. 2018
3. **Վաղարշյան Ա.**, Պետության և իրավունքի տեսություն: – Եր. 2011
4. **Խրոպանյուկ Վ. Ն.**, Պետության և իրավունքի տեսություն, թարգմանությամբ Խ. Հարությունյանի: – Եր. 1997
5. **Հովհաննիսյան Գ.**, Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն: – Եր. 2020
6. **Жан Луи Бержель**, Общая теория права, под общей редакцией В.И. Даниленко. – М. 2000
7. **Խաչատրյան Ս.**, Պետության և իրավունքի տեսություն, հարցեր և պատասխաններ: – Եր. 2008
8. **Ղամբարյան Ա.**, Իրավունքի սկզբունքների արտահամակարգային կոլիզիաները և ներհամակարգային կոնֆլիկտները, Դատական իշխանություն, մայիս-հունիս, 2019
9. **Պողոսյան Վ., Մարգարյան Ն.**, Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, համառոտ պարզաբանումներ: – Եր. 2016

10. **Авакян С. А.**, Конституционное право России, Том 1. – М. 2014
11. **Боброва Н. А.**, Конституционный строй и конституционализм в России. – М. 2003
12. **Михалева Н. А.**, Понятие и система принципов социалистической конституции, Правоведение N 6, 1977
13. **Аверинцев С. С., Араб-Оглы Э. А., Ильичев Л. Ф.**, Философский энциклопедический словарь. – М., 1989
14. **Кабышев В. Т., Пряхина Т. М.**, Теоретические проблемы российского конституционализма. // Вестник Саратовской государственной академии права, 1995, номер 2-ой
15. **Ռուսաստանի Դաշնության Սահմանադրություն**, ընդ. 1993 թ. դեկտեմբերի 12
16. **Իտալիայի Հանրապետության Սահմանադրություն**, ընդ. 1947 թ. դեկտեմբերի 22
17. **Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրություն**, ընդ. 1949 թ. մայիսի 23, հոդված 20
18. **Չեխիայի Հանրապետության Սահմանադրություն**, ընդ. 1992 թ. դեկտեմբերի 16
19. **Ղազախստանի Հանրապետության Սահմանադրություն**, 1995 թ. օգոստոսի 30
20. **Կուբայի Հանրապետության Սահմանադրություն**, ընդ. 2019 թ.
21. **Քուվեյթի Սահմանադրություն**, ընդ. 1962 թ.
22. **Հարությունյանի Գ. Գ., Վաղարշյանի Ա.** ընդ. խմագրությամբ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: – Եր. 2010
23. **Козлова Е. И., Кутафин О. Е.**, Конституционное право России. – М. 1995
24. **ՀՀ Սահմանադրական դատարան**, որոշում թիվ ՍԴՈ-880, ընդ. 2010 թվականի ապրիլի 23, ՀՀԳՏ 2010.05.05/18(752) Հոդ.464
25. **«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք**, ընդ. 2018 թվականի հունվարի 17-ին, հոդված 61, 4-րդ մաս, ՀՀԳՏ 2018.01.31/7(1365) Հոդ.74
26. **Մանասյան Ա. Ա.**, Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավական համակարգում և դրանց դերը սահմանադրության կայունության ապահովման գործում: – Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2013
27. **Кокотов А. Н.**, Право конституции в российском праве. // Актуальные проблемы российского права, 2014, номер 10-ый
28. **Чепурнова Н. М.**, Конституционный принцип народовластия в Российской Федерации: Проблемы реализации. // Вестник Московского университета МВД России, номер 5-ый, 2018
29. **Виноградов В. А., Ларичев А. А.**, Народовластие как конституционная ценность: проблемы теоретического подхода и практики реализации, Народовластие как конституционная ценность. – М. 2021
30. **ՀՀ Սահմանադրական դատարան**, որոշում թիվ ՍԴՈ-389, ընդ. 2002 թվականի հոկտեմբերի 1, ՀՀՍԴՏ 2003/2
31. **ՀՀ Սահմանադրական դատարան**, որոշում թիվ ՍԴՈ-721, ընդ. 2007 թվականի դեկտեմբերի 18, ՀՀԳՏ 2008.01.07/1(591) Հոդ.11

Տճան/Հանձնվել է՝ 14.06.2021
Рецензирована/Գրախոսվել է՝ 21.06.2021
Принята/Ընդունվել է՝ 25.06.2021